1919

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Չէ՛, չի լըռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին։

Թընդում է դեռ նոր ձեռքերում
Էն քընարը գովանի,
Խընդում է դեռ նոր երգերում
Վըրաստանը գեղանի։

– Ողջո՛ւյն, ողջո՛ւյն Աստվածային
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էն հին –
Եղբայրական երգ ու սեր։

Հին օրերի վերջալուսին,
Արշալուսին նոր կյանքի
Երգենք սըրտանց ու միասին
Երգը հանուր բերկրանքի։

Բարձըր հընչի մեր երգը թող,
Չարի ձենը խըլացնի,
Հընչյուններովն իր կախարդող
Երկրե երկիր թող անցնի։

Ամեն կողմից թող ամենին
Հըրապուրի ու բերի
Բազմալեզու խըրախճանին
Ծեր Կովկասի ազգերի։

Ելնե՛նք՝ տեսով ու ճանաչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր։

Շատ, շատ արցունք թափվեց մեզնում,
Մեն մի կաթիլն – մի խըրատ,
Անլուռ, անդուլ էն է ասում –
Ճամփա չունի գործը վատ։

Թող՝ ով կուզի՝ երկար-բարակ
Զոռ տա խելքին մինչև մահ,
Մենք իմաստուն – սիրենք, խնդանք,
Կյանքը էս է, ինչ որ կա։

Զարկե՛ք ուժգին մեծ Շոթայի
Էն քընարը ոսկելար,–
Մարդը ինչ տա – էն կըշահի,
Թող իմանա ողջ աշխարհ.–

Տեսնի քանի նոր ձենով է
Խոսում Աստված էս երկրում,
Պատգամներով պայծառ ու վեհ,
Հազար ու մի երգերում։

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն Աստվածային
Արի, բարի ընկերներ,

Արարատի կողմից էն հին –
Եղբայրական երգ ու սեր։